

Կոչէր խորհըրդով կարապետին մայրն .  
 կաքաւէր փութով կարեւոր պառաւն :  
 կորուսնեալ Եւայ կողոպտեալ կենօք ,  
 կանգնեցաւ ի վեր , կայր մօտ առ կուսին .  
 կոշկոճեալ ոտիւք կորափոտ անձամբ  
 կանգնեցաւ ի վեր կուսին խոնարհեալ :  
 կարմրազայր<sup>1</sup> այտիւք կապուտակ շրթամբք  
 կոճոպեալ հերօք կաթէր արտասուզք :  
 կեղկեղեալ մարմնովն կարկառէր ըգձեռուն .  
 կըրծտէր զատամունսն կոծէր յոյժ ըզկուրծսն :  
 կանչեալ մեծաձայն կոչեալ զնախահայրն  
 կանգնեալ Ադամնյ ի կործանմանէն .  
 կողկողէր ձեռօք կոչէր արտասուզք .  
 կաց կոյս եւ ծընաւ կեանս ազգի մարդկան :  
 կանգնելով հովիւքն կոչ ասեն հօտիցն  
 կապուտակ սուլիցն կումբ առեալ խըմբին :  
 կէտք են երկուցեալ , կայտառք են սարսեալ  
 կարծեալ կէտք ի դէմն , կոծի ծով ալեօք :  
 կայր Տէրն ի վերայ կապուտակ գետոյն ,  
 կամէր մըկրտել կարապետ աջովն :  
 կայր Հայր ի վերուստ , կանչէր Յովաննու .  
 « կայ դա իմ որդի , դըմա լուարուք » :



## ՏԵՍԱՐԱՆ ՄԱՐԴԿԱՑԻՆ ՑԵՂԻ

### ԱՄԵՐԻԿԱ

**Զիլէ կամ Զիլի կ'ըսուի Ամերիկայի**  
**Ովկիանոսին եզերքը երկնցած ցամաք**  
**երկիրը . լեռները հրաբուխներով լե-**  
**ցուն են , և այն պատճառաւ ալ ստէպ**  
**երկրաշարժ կ'ըլլայ հոն . հիւսիսային**  
**կողմը անապատ է , բայց գետեղերք**  
**տեղուանքը շատ բարեբեր . իսկ հարա-**  
**ւային կողմը շատ անտառներ ունի :**

Կլիման բարեխառն է և առողջարար .  
 բերքերուն մէջ՝ թէպէտ ոսկին քիչ է ,  
 բայց արծալթն ու պղինձն՝ առատ :  
 Զիլէի ժողովուրդը մէկ ու կէս միլիո-  
 նի մօտ է . գեղեցիկ և ուժով մարդեկ  
 են , բնութեամբ զուարթ . 1810ին Սպա-  
 նիացիներէն զլուխ քաշելով՝ հասարա-  
 ւային կապետութիւն հաստատեցին . քաղա-

1 Յօրինակն կարմաբազայու :



Օրիորդ Անարատ յղուրեան կղզոյ .

Քականութեան մէջ ետ մնացած են՝  
Հարաւային Ամերիկոյ ուրիշ ժողովը.  
Դոց պէս :

Քաղաքական բաժանմամբ՝ ութը նա-  
հանգէ կը ձևանայ Զիլէի երկիրը, որք  
են Ա. Սանթիակոյ, որուն մէջն է Զի-  
լիի համանուն մայրաքաղաքն ալ : —

Բ. Ագոնգակուա : — Գ. Գրիմզոյ :

Դ. Գոլշակուա : — Ե. Մառլէ : — Զ.  
Գոնսէրտիոն (Յղութիւն), որ Մառլեայ  
հարաւային կողմը կ'իյնայ . նոյն ծովե-  
զերքը համանուն քաղաք մը կար՝ որ  
1751ին գետնաշարժով մը կործանե-  
ցաւ, և աւերակներն ալ ծովուն ալիք-  
ներուն տակը ծածկուեցան : — Ի. Վալ-  
տիվիա . — Ը. Զիլոէ . Զիլիի հարաւա-



Զիւեցի .

Կողմը 47 թուով կղզիներ են, որոնցմէ կղզիներուն մէջ գլխաւորը Զիլու Կը-  
25ին մէջ միայն բնակութիւն կայ . այս սուխ, որ 15,000 բնակիչ ունի :